«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2018Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԵՓԱԿՎԱԾ ՏԱՐՎԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ

ՕԳՈՍՏՈՍ- 2019թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	2
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ

ՀՀ , ք Երևան
Նուբարաշեն, 10 փող, տուն 6 Հեռ: 010 57 28 46
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1
Աուդիտորական գործունեութ.յան լիցենզիա թ.իվ ԱԾ N 048 առ 02.08.2006թ..
տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարութ.յան կողմից՝ անժամկետ

Անկախ աուդիտորի եզրակացություն

Ներկայացվում է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2018թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-Վարքագիրք) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Առդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների առդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող առդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված առդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած առդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք առդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում առդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- ձեռք ենք բերում առդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան առդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք

բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը՝ դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:
Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

30 օգոստոսի 2019թ.

Տնօրեն՝ Մելս Պետրոսյան

Աուդիտոր՝ Շուշանիկ Մազուլյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	5,749,428	5,574,529
Ոչ նյութական ակտիվներ	5	573	624
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**5,750,001**	**5,575,153**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	336,527	274,799
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	102,013	73,659
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	84,848	108,548
Այլ ընթացիկ ակտիվներ		4,213	4,689
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**527,601**	**461,695**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**6,277,602**	**6,036,848**
ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Համալրված բաժնետիրական կապիտալ	9	607,370	607,370
Էմիսիոն եկամուտ	9	17,876	17,876
Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)		2,256,222	2,264,219
Պահուստային կապիտալ		51,039	51,039
Ընդամենը սեփական կապիտալ		**2,932,507**	**2,940,504**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	10	356,660	153,915
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	1,129,287	1,127,505
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն	10	12,194	24,778
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	580,338	643,401
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**2,078,529**	**1,949,599**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	10	10,414	38,479
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	336,923	482,783
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	143,957	109,200
Ընթացիկ պահուստներ	14	775,272	516,283
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**1,266,566**	**1,146,745**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**6,277,602**	**6,036,848**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2019թ. օգոստոսի 26-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 9-42)

Տնօրեն՝
Ա. Տանանյան

Գլխավոր հաշվապահ՝
Շ. Անանյան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Շարունակվող գործունեություն			
Հասույթ	15	2,839,735	2,603,479
Վաճառքի ինքնարժեք	15	(2,380,917)	(2,268,572)
Համախառն շահույթ (վնաս)		**458,818**	**334,907**
Վարչական ծախսեր	16	(177,077)	(154,928)
Այլ եկամուտ	17	640,446	1,346,496
Այլ ծախսեր	17	(890,786)	(1,658,200)
Ֆինանսական ծախսեր	18	(34,276)	(45,151)
Այլ օգուտ (կորուստ)	19	1,030	(5,118)
Զուտ շահույթ (վնաս) նախքան հարկումը		**(1,845)**	**(181,994)**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	20	9,073	31,788
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		7,228	(150,206)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		7,228	(150,206)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 9-42)

Տնօրեն՝
Ա. Տանանյան

Գլխավոր հաշվապահ՝
Շ. Անանյան

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	Պահուստային կապիտալ	Ընդամենը
2017թ հունվարի 1-ի դրությամբ	**607,370**	**17,876**	**2,421,976**	**51,039**	**3,098,261**
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-		(150,206)	-	(150,206)
Հայտարարված շահաբաժիներ	-	-	(7,551)	-	(7,551)
2017թ դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	**607,370**	**17,876**	**2,264,219**	**51,039**	**2,940,504**
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	7,228	-	7,228
Հայտարարված շահաբաժիներ	-	-	(15,225)	-	(15,225)
2018թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**607,370**	**17,876**	**2,256,222**	**51,039**	**2,932,507**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 9-42)

Տնօրեն՝
Ա. Տանանյան

Գլխավոր հաշվապահ՝
Շ. Անանյան

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<<Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>>ՓԲԸ
2018թ . դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**108,548**	**58,546**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	2,878,673	2,627,392
Այլ մուտքեր, այդ թվում	10,621	18,614
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(1,157,476)	(1,125,098)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(1,054,091)	(876,098)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ, բացառությամբ շահութահարկի	(444,297)	(419,573)
Վճարված շահութահարկ	(76,078)	(1,422)
Այլ վճարումներ	(25,754)	(4,227)
Վճարված տոկոսներ	(32,542)	(41,020)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**99,056**	**178,568**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	(275,573)	(100,157)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(275,573)**	**(100,157)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկեր և փոխառություններ՝ զուտ մուտք/ (ելք)	160,391	(25,546)
Վճարված շահաբաժիններ	(7,551)	(3,529)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**152,840**	**(29,075)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(23,677)**	**49,336**
Արտարժութի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(23)	666
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	**84,848**	**108,548**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 9 -42)

Տնօրեն՝
Ա. Տանանյան

Գլխավոր հաշվապահ՝
Շ. Անանյան